

**Տ. ԱՐՏԱԿ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԻԳՐԱՆՅԱՆԻ ՔԱՐՈՉԸ
ԽՈՍՎԱԾ Ս. ԷՇՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱԾՄՈՒՄ
ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

(20 մարտի 2005 թ.)

«Մի երկնջիր, դուսպր Միովնի, ահասասիկ
քազատոր Ձռ զայ նարեալ ի վերայ յաւանակի
իշոր»:

(Տովի. ԺԲ 15)

«Յանուն Նոր և Որդոյ և Նոգոյն Սրբոյ. ամէն»:

Առջևում այն մեծ Շաբաթն է, իրնթացս որի Հիսուս պիտի մարտնվի, չարչարվի և զերեզ-
ման դրվի: Առաջին օրն իսկ այդ Շաբաթի՝ Հիսուսի համար հաղթական էր: Մեկնելով Բե-
թանիայից, աշակերպների հետ Երուսաղեմի ճանապարհը բնից: Բազմաթիվ ուխտավոր-
ներ, ովքեր Զարդիկը Երուսաղեմում դրուելու համար եկել էին Հրեասպանի շրջաններից՝
Եղոնից, Գալիլիայից և այլ երկրներից, վեղյակ էին մեծ մարզարի ներկա լինելու մասին:
Աշակերպները պարզում էին Տիրոջ կյանքի հրաշալիքները, որով անուղղակիորեն պար-
րապրում էին ժողովրդական այս մեծ և հայրին ցոյցը:

Նրանք զգեստներ էին փարածում ճանապարհին, ծառերից ոսքեր կիրում և նրանցով
զերինը ծածկում, որիշներ ծեռքներին արմավենու ճյուղեր բռնած ընդառաջ էին զնում,
«Օվաննա ի բարձունս» աղաղակելով՝ զովում էին Նրան, Ով գալիս էր բոլորին փրկելու:
Հիսուս, որ Իր հասարակական կյանքից ներս մինչև այդ օրը մերժել էր մեծաշուրջ ընդունե-
լությունները, խուսափել և զգուշացել էր ժողովրդական չափազանց խանդավառություննե-
րից, այսօր ընդունում է Իրեն ծոնված հաղթանակը, ընդունում է Իր Մեսիայի փիփղոսը և
արքայության զալոսպրը հոչակող բացականչությունները:

Այս մեկ օրվա կատավոր ընդունելությունն ասրվածային ծրագրի այս մի մասն էր մի-
այն, որի մասին մարզարենները ծանուցել էին արդեն: Վեց դար առաջ նրանցից մեկը՝ Զա-
քարիան, ասել էր. «Ուրախ եղիք, դուսպր Միովնի, ցնծա, դուսպր Երուսաղեմի, ահա քո բա-
զավորը զալիս է դեպի քեզ, խոնարի է և ավանակի վրա նսրած, պիտի խորփակի Եփրեմի
կառքերը և Երուսաղեմի ծիերը, պիտի խորփակի պարերազմող աղեղը, պիտի քարոզի
խաղաղություն ազգերին և պիտի փիրի ծովից ծով» (Նմմք. Զաք. Ձ 9-10):

Հիսուս իրականացնում է և այս մարզարենությունն ու կափարում Նոր կամքը: Գիրե, որ
այդ հաղթանակը դեպի մահ է դանում Իրեն, զիտի, որ այն չի լինում առանց դառնության:
Շուրջ երեք փարիներ ի վեր Իր առաքելությունն այնպես կարարեց, որ քարերն անզամ
եթե ծայն ունենային, կաղաղակեին, սակայն ճշմարգության դեմ համառող մարդը կարող
է նոյնիսկ ժայռից ավելի անզգա և անշարժ լինել:

Փարիսեցիների զայրույթն առավել սաստիկանում էր, որովհետև զորավոր էին զգում, երբ
ժողովուրդը նվաճված և խոնարիված էին փեսնում, իսկ եթե իրենցից ավելի հզոր մի անձ-

Նսվորություն այդ ժողովրդին իրենց ծեռքից ազարեր, այդ դեպքում իր հսկ անկում արձանագրող իշխանությանը հափուկ արելությամբ կարգահայտվեին, ամեն ինչի ծեռք զցելու պարագաները լինելով՝ միայն թե իրենց թվայցալ հեղինակությունն ու ազդեցությունը վերադարձնեին։ Այս դեպքում ոճիրն անզամ արդարացվում էր իրենց համար։

Երբ Դիսուս մովեցավ Երուսաղեմին և դեսավ այն, փիրեց, լաց եղավ և աղաղակերով ասաց. «Գոնք այս օրերին զիվենայիր դու քո խաղաղությունը, բայց այժմ ծածկվեց քո լուսողությունից, որովհեքը օրեր պիտի զան, երբ թշնամիներոյ քո շուրջը պատնշեց պիտի կանգնեցնեն, պաշարեն և ամեն կողմից նեղեն քեզ, հիմնահարակ պիտի անեն քեզ և սպանեն քո քնակիչներին, քարը քարի վրա քնավ չեն թողնելու, որովհեքը դու չիմացար այն ժամանակը, երբ Ասրված փրկելու եկավ քեզ» (Տմնդ. Դոկ. ԺՇ 41-43):

Դիսուս մի կողմ է թողնում այն մեկ օրվա որախությունը, որ Տայրը շնորհել էր իրեն նախրան չարչարանքների սկիզբը։ Իր ժողովրդի հանցապարփ քաղաքի ու նրա ահավոր վախճանի համար խորապես փիրում է։ Խնչան վկայում են ավելարանիչները, Տերն ուղղակի փաճար գնաց։ Նրա՝ Իր Դոր գոտոն շփափելու իմաստը բացադրելի է, զիվեր Նա, որ Ինքն է հավիրյաններից սահմանված զոհը, որ և զայիս է Ինքն Իրեն ընծայելու, նյութական պարարագների ժամանակն անցել է, Ասրված հոգուոր պարարագն է կամենում, մեսիական թագավորությունը կհասդարվի, և Դիսուս սրբերի փիրակալ կդառնա այն ժամանակ, երբ ի զին Իր կյանքի Իր վրա կվերցնի աշխարհի մեղքը։

Աղոթելուց հետո, ինչպես վկայում է Մարկոս ավելարանիցը, երկար դիվեց Իր ժողովրդի բարոյական խեղճությունը և դա այն լրաճարում, որպես ամեն ինչ սուրբ պետք է լիներ։ Եվ Դիսուս դեսավ, որ ժողովուրդը լի է սուրբ բարեպաշտությամբ, շահասիրությամբ, կեղծավորությամբ, զայրացավ և ասաց. «Գրված է՝ Իմ գոտունը աղոթքի դուռը պիտի կոչվի, իսկ դուք ավագակների որք եք արել այդ» (Մարք. ԻՎ 13):

Այդուհանդերձ, այդ նոյն պահին նոյնիսկ, երբ խսդությամբ պարփռում էր հանցավորներին և անարժաններին, խաղաղում էր, երբ Իրեն էին դիմում հիվանդներն ու խեղճերը։ Ժողովրդի նախընթաց օրվա եռանդն ու խանդավառությունը չէր մարել. նրանք շարունակում էին աղաղակել։ «Օվսաննա, որդույ Դաւթի»։ Այս աղաղակները զայրակղության պարբռա եղան։ Տաճարի չակերպյալ հեղինակավորները, որ դեմ էին Դիսուսին, մովեցան Նրան և ասացին. «Լուրիմ ես, թե ինչ են ասում»։ Դիսուս Իրեն հապուկ խաղաղ պարախանով շփոթեցրեց նրանց՝ ասելով. «Այն, դուք չե՞ք կարդացել, թե երեխանների ու ծծերների թերանով օրինություն կարարեցիր» (Մարք. ԻՎ 16)։ Նրեցից քահանաներն ու ազդեցիկներն իրենց անելիքն արդեն որոշել էին։ Դիսուս պետք է մնաներ։

Մայրամուր էր... Ցուրայինների հետ բռնեց նորից Բեթանիա դանապարհը, աշակերպները դիսան, որ նախորդ օրվա անիծված թզենին, որ անսպուղ էր, արմադներով էր չորացել։ Անիծված և այդ աննծըռվ չորացած թզենու խորհուրդն աշակերպների մորում կարծես թե Վարդապետի կարողությունների նկարմամբ վախ միայն արթնացրեց, ուստի նրանց առավել կարարյալ հավաք ներշնչել կամենալով ասաց. «Նավադր ունեցեք Ասրծո հանդեպ»։

Դիսուս ինչպիսին որ Ինքն էր, այդ նոյնը պահանջում էր, որ լինեն աշակերպները։ Այդ ժամանակ ասում է ամենայն ինչ ձեզ կինազանդվի, ապա շարունակելով ավելացնում է.

«Վարահ եղեք, որ ով այս լերանն ասի՞ ել և ծովն ընկիր, և իր մդքում ցրարակուսի, այլ հավատա, թե իր ասածը կլինի, նա ինչ որ ասի, կկարարվի»: Եվ կամ. «Ինչ որ խնդրեք աղոք-քով, հավատացնեք, թե պիփի ընդունեք, և ձեզ պիփի փրվի» (Հմբար. Ղոկ. ԽԱ 21:22): Այս պիփի աղոքը ենթադրում է կարարյալ սեր, ուղիղ և բարի սիրով: Եթե աղոքը սկսեք և նրան ինչ որ բան ունեք ձեր եղբոր դեմ, ներեք նրան, որպեսզի ձեր երկնավոր հայրն է ձեզ ների:

Երկնավոր Հոր անհուն ողորմածությունը մեր ողորմության վարձակրությունն է: Տիրոջ գութը կշարժվի նրանց հանդեպ, ովքեր զթասիրիք են, կսիրի նրանց, ովքեր սիրում են, և ապա կլիխ ու կընդունի նրանց բոլոր խնդրանքները: Գերբնական զորության արմադին է կարարյալ հավատին առ Աստված: Նավադրով կեցուն մարդն ասրվածորդու հերք հաղորդություն կունենա, և Աստված նրան այսօր և ընդմիշտ Իր բարության և զորության գործիք կդարձնի: Թող մեր Տիրոց՝ Դիտու Քրիստոսի շնորհը, խաղաղությունը, սերը մնա բոլորին հետ լինի. ամեն: